



ՆԵՐՔԻՆ
ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԿՕՄԻՏԷՆԵՐՈՒ

1921, ՅՈՒՂԻՍ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՕՄԻՏԷՆԵՐՈՒ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայ Յեղափոխական Դաճակցութեան Ամերիկայի կոմիտէները կազմակերպուած են Հ. Յ. Դ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի գերագոյն իրաւասութեան տակ, աջակցելու համար Հ. Յ. Դաճակցութեան հետապնդած իտէպի իրագործումին, համաձայն անոր Ծրագրին եւ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի որոշումներուն:

Ամերիկայի Դաճակցական կազմը. — Կազմակերպուած 1896ին — պաշտօնապէս ճանչցուած է Հ. Յ. Դ. 1898-ին գումարուած Բ. րդ Ընդհ. Պատգամաւորական Ժողովի կողմէն, որուն առաջին անգամ հրաւիրուած է մասնակցելու: Եւ, այդ Ընդհանուր Ժողովին մշակած կանոնադրութեան յօդուած 30-ի համաձայն խմբագրուած է հետեւեալ կանոնադիրը Ամերիկայի Հ. Յ. Դաճակցական շրջանը ղեկավարելու համար:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 1. — Բարոյականի տէր ամէն չափահաս հայ անհատ (առնուաղն 18 տարեկան) առանց կրօնի եւ սեռի խտրութեան, կրնայ անդամակցել Հ. Յ. Դ. Ամերիկայի կոմիտէի մը կամ խումբի մը, եթէ

կ'ընդունի կուսակցութեան ծրագրին ու գործելակերպը, կ'ենթարկուի կանոնադրին և ամէն ջանքի գործ կը դնէ կեանքին մէջ գանձնաբեր իրականացնելու :

ՅՕԴ. 2.— Ուրիշ ոեւէ հայ քաղաքական կուսակցութեան սրտականող անձ չի կրնար անդամակցել Դաշնակցական կոմիտէի մը :

ՅՕԴ. 3.— Կոմիտէի մը անդամակցութեան թեկնածուն զբաւոր և և կամ ընկերի մը միջոցով կը դիմէ իր վայրի կոմիտէին, յայտնելով իր փափաքը : Կոմիտէն ծանօթ ընկերի մը միջոցով կը զրկէ դիմումագրի օրինակ մը, զոր թեկնածուն կը լեցնէ և ստորագրելով կը վերագործնէ կոմիտէին : Կոմիտէն թեկնածուի նկարագրին, բարոյականին և շ. Յ. Դաշնակցութեան մասին անոր ունեցած ծանօթութեան մասին համոզում զոյացնելէ ետքը, որոշում կը կայացնէ և զայն կը հաղորդէ թեկնածուին, զբաւոր և և կամ բերանացի կերպով, ընկերոջ մը միջոցաւ :

ՅՕԴ. 4.— Ընդունուած թեկնածուն կը հրաւիրուի կոմիտէի յաջորդ անդամական ժողովին և կ'ընէ հետեւեալ ուխտը :—

Կ'ուխտեմ բոլոր ընկերներու ներկայութեան հաւատարիմ մնալ շ. Յ. Դաշնակցութեան դրօշին, իրականացնել անոր հետապնդած նպատակները եւ յարգել ծրագիր-կանոնագրի բոլոր տրամադրութիւնները :

ՅՕԴ. 5.— Ամերիկայէն դուրս գտնուող դաշնակցական ոեւէ խումբի կամ կոմիտէի անդամ եթէ պատշաճ յանձնարարական չի կրնար բերել տալ կամ

ներկայացնել, կ'ընդունուի իբր նոր անդամ :

ՅՕԴ. 6.— Ամէն ընկեր իր տեղի կոմիտէին անդամակցելու է : Երբ ընկեր մը բանաւոր պատճառունի իր վայրի կոմիտէին չը պատկանելու, ուրիշ կոմիտէի մը անդամակցելու համար պէտք է ստանայ իր կոմիտէի, իսկ դժուարութեան պարագային՝ Կեդր. Կոմիտէի հաւանութիւնը :

ՅՕԴ. 7.— Ամէն նոր ընկեր առանց բացառութեան կոմիտէի մէջ ընդունուած պահուն առնուազն մէկ տօլար մուտք կը վճարէ :

ՅՕԴ. 8.— Ամէն դաշնակցական կը վճարէ Ամերիկայի Պատգամ. Ժողովին կողմէ որոշուած ամսավճարը :

ԾԱՆՕԹ.— Ուսանող ընկերներ երէ հնարաւորութիւն ունին, կ'ենթարկուին 7-րդ եւ 8-րդ յօդուածներու տրամադրութեան. հակառակ պարագային՝ ազատ են ամսատուրք վճարել :

ՅՕԴ. 9.— Այն դաշնակցականները, որոնց կոմիտէն կամ խումբը կազմալուծուած է անդամներու օրինական թիւը պակասած ըլլալուն պատճառով, իրենց տուրքը կը զրկեն մերձաւոր կոմիտէի մը : Իսկ մեկուսի վայր մը գտնուող ընկերները տուրքը կըրնան զրկել ուղղակի Կեդր. Կոմիտէին :

ԾԱՆՕԹ.— Կազմալուծուած վայրի անհատ դաշնակցականներու անդամավնարն ստացող կոմիտէն, պարտաւոր է գանձնաբեր տեղեակ պահել կազմակերպական գործունէութեան մասին. այդ պարագային, սոյն անհատները կը նկատուին անդամ յիշեալ կոմիտէին :

307. 10.— Իրաւասու դաշնակցական կը կոչուին այն ընկերները, որոնք

Ա) Կուսակցական ամբաստանութեան տակ չեն գտնուիր .

Բ) Կամիտէի ընկերական ժողովներուն կանոնաւորապէս ներկայ գտնուած են (յարգելով բացակայութեան բանաւոր պատճառները) .

Գ) Կազմակերպական տուրքերը ամբողջապէս վճարած են կամ նիւթական անկարողութեան պատճառով կամիտէին կողմէ արտօնուած են չվճարելու :

ԾԱՆՕԹ. Ա.— Իրաւասու դաշնակցականները միայն կրնան պատշոյնի կոչուիլ եւ ընտրուիլ գործադիր մարմնի անդամ, պատգամաւոր, դատաւոր, եւայլն :

ԾԱՆՕԹ. Բ.— Առանց բանաւոր պատգամի 3 անգամ շարունակաբար կոմիտէի անդամական ժողովներէն բացայակող ընկերը երկու անգամ ձայնի եւ քուէի իրաւունքէն կը զրկուի, իսկ մէկ տարուան ընթացքին ուրքը ժողովներէ յաջորդաբար բացակայողը հեռացուած կը նկատուի դաշնակցական շարքերէ :

307. 11.— Կամիտէ մը կամ խումբ մը կրնայ մասնաւոր դիւրութիւններ տալ իր այն անդամներուն, որոնք բանաւոր պատճառներով անկարող կը լինին վճարելու կազմակերպական տուրքերը :

ԿՕՄԻՏԷ ԵՒ ԽՈՒՄԲ

307. 12.— Նոյն տեղը գտնուող հինգ կամ աւելի անձեր միասին դալով եւ Ամերիկայի Կեդր. Կո-

միտէի վաւերացումը ստանալով կը կազմեն կոմիտէ մը :

ԾԱՆՕԹ.— Հինգ հոգիէ պակաս եւ առնուազն երեք անձեր կրնան կազմել խումբ մը, եթէ հնարաւորութիւն չունին մասնակցելու մօտակայ կոմիտէի մը :

307. 13.— Խումբը ունի կամիտէի մը բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները . բայց չի կրնար մասնակցիլ Պատգամ. Ժողովներու :

307. 14.— Կամիտէի մը կամ խումբի մը կազմութեան համար հարկ եղած օրինական քննութիւնն ու ձեւակերպութիւնը կը կատարէ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը եւ կամ մօտակայ կոմիտէներէն մէկը եւ կը տեղեկագրէ Կեդր. Կոմիտէին :

307. 15.— Կամիտէն պարտաւոր է աւնուազն ամիսը անգամ մը անդամական ժողով գումարել : Ժողովը օրինական կը համարուի, երբ ընկերներու մեծամասնութիւնը ներկայ է . հակառակ պարագային՝ երկրորդ հրաւերին պատասխանող ընկերներու թիւը օրինական կը համարուի :

307. 16.— Կոմիտէի ժողովին կրնայ ներկայ գտնուիլ ուրիշ կոմիտէի պատկանող ընկեր մը՝ իբրեւ հիւր՝ եթէ գէթ երկու տեղացի ընկերներ կը հաստատեն եւ եթէ ժողովը կ'արտօնէ :

307. 17.— Կոմիտէն իր յանձնարարականներուն մէջ միշտ յիշատակելու է թէ յանձնարարուած ընկերը իր տուրքերուն որքանը վճարած է եւ ո՞րքանը արտոնիլ թողած եւ թէ՛ Լ՞ոնչ է եղած իր վարմունքը կոմիտէին մէջ :

307. 18.— Կոմիտէն պարտաւոր է իր մէջէն

արտաքուստ կամ ուրիշ պատճառով հեռացած անդամին անուշը անմիջապէս հաղորդել Կեդր. Կօմիտէին :

ՅՕԴ. 19.— Կօմիտէն ջանալու է ըստ կարելու յան յաճախ գումարել համակրական եւ հրատարակային ժողովներ : Հրատարակային ժողովներու ատենախօսները կը հրատարակուին Կեդր. Կօմիտէին միջոցով :

ՅՕԴ. 20.— Կօմիտէն հաւաքաբար պատասխանատու է իր գանձին եւ դոյքին համար :

ՅՕԴ. 21.— Կօմիտէն պարտաւոր է իր գանձին մէջ հաւաքուած գումարները ղրկել երեք ամիսը անդամ մը Կեդր. Կօմիտէին, պահելով միայն 15 առ հարելը՝ իր տեղական դուռ կազմակերպական ընթացիկ ծախսերուն համար :

ՅՕԴ. 22.— Պատգամաւորական ժողովի դուրսումէն մէկ ամիս առաջ կօմիտէն պարտաւոր է իր բոլոր տուրքերը վճարած ըլլալ եւ հաշիւները մանրամասնօրէն ներկայացուցած Կեդր. Կօմիտէին :

ՅՕԴ. 23.— Կօմիտէն է յարաբերութեան պաշտօնական կապը իր մէկ անդամին եւ ուրիշ դաշնակցական մարմիններու միջեւ :

ՅՕԴ. 24.— Կօմիտէն եթէ իր օրինական նուազագոյն թիւը կորսնցնէ, կը վերածուի խումբի. իսկ եթէ այս վերջինն ալ կորսնցնէ իր օրինական նուազագոյն թիւը, ինքնին կը համարուի լուծուած : Լուծուած կօմիտէի մը կամ խումբի մը դոյքերը կը յանձնուին Կ. Կօմիտէին :

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՅՕԴ. 25.— Կօմիտէն կ'ունենայ իր վարչական մարմինը, որ կը բաղկանայ 3-5-7 անդամներէ : Վարչական մարմինը կ'ունենայ իր ղեկանը :

ՅՕԴ. 26.— Վարչական մարմինը կ'ընտրուի զազանի քուէներու մեծամասնութեամբ (պայմանաւ որ ընտրութեան մասին կանխաւ ծանուցուած ըլլայ ընկերներուն) վեց ամսուան համար. անդամները վերընտրելի են : Ընտրութիւնները կատարուած ըլլալու են մինչեւ յունիս եւ դեկտեմբեր ամիսներու վերջերը : Ընտրութիւններու արդիւնքը անմիջապէս տեղեկագրուելու է Կեդր. Կօմիտէին :

ՅՕԴ. 27.— Վարչութեան ղեկանը կը ստանայ կօմիտէին անուշով եկած նամակները, գանձնք կը ներկայացնէ կօմիտէի առաջիկայ ժողովին եւ կը վարէ կօմիտէի ընթացիկ գործերը՝ կօմիտէի որոշումներուն համաձայն :

ՄԱՆՕԹ.— Կօմիտէին ուղղուած պաշտօնական ամէն գրութիւն անդամական ժողովին մէջ կը կարդացուի եւ ապա պահ կը դրուի կօմիտէի ատենադպիրին քով :

ՅՕԴ. 28.— Ստիպողական պարագաներու տակ միայն, երբ հնարաւոր չէ անդամական ժողով դուրսել, վարչութիւնը պէտք է տնօրինութիւն մը ընէ անյետաձգելի խնդրոյ մը մասին եւ ներկայացընէ դայն կօմիտէի յառաջիկայ ժողովի վաւերացման :

ՅՕԴ. 29.— Վարչական մարմնի անդամ, պատգամաւոր, դատաւոր, եւլն. կրնան ըլլալ միայն այն ընկերները, որոնք զէթ տարի մը անընդհատ գտնու-

լած են Դաշնակցութեան Ամերիկայի կաղմին մէջ եւ վեց ամիս՝ տեղական կօմիտէին մէջ եւ իրաւասու են յօդուած 10-ի համաձայն :

ՄԱՆՕԹ. — Բացառութիւն կը կազմեն նորակազմ կօմիտէները :

ՅՕԴ. 30. — Կեդր. Կօմիտէի անդամ մը, ինչպէս նաեւ դործիչ ընկեր մը, չեն կրնար ըլլալ վարչական մարմնի եւ Շրջանային Խորհուրդի անդամ կամ պատգամաւոր :

ՅՕԴ. 31. — Եթէ վարչական մարմինը անհօգ, թոյլ եւ պարտադանց գտնուի եւ այդ պարագան հաստատուի, կօմիտէն կրնայ լուծել զայն մեծամասնութեան քուէով՝ պաշտօնավարութեան շրջանի լրումէն առաջ եւ նոր մը ընտրել :

ՅՕԴ. 32. — Ատենապետին պարտականութիւնն է կօմիտէն ժողովի հրաւիրել, հսկել ժողովին կարգապահութեանը եւ ատենադպիրին հետ ստորագրել պաշտօնական թուղթերը :

ՅՕԴ. 33. — Ատենադպիրը կը կատարէ կօմիտէի բոլոր դրասոր դործերը եւ պատասխանատու է կօմիտէի բոլոր թուղթերու անվթար պահպանումին համար, բացի դանձային թուղթերէն : Ատենադպիրը ունենալու է անուագն երկու տոմար՝ առաջինին մէջ համառօտիւ արձանագրելու համար կօմիտէական ժողովներու ատենադրութիւնները, երկրորդին մէջ՝ կօմիտէի անդամներուն անունը, անհամաձայնութիւնները : Այս վերջին տոմարին մէջ կ'արձանագրուին նաեւ անդամներու մասին ծանօթութիւններ (մահ, տեղափոխում, հեռացում, արտաքսում, եւլն. եւլն.) :

ՅՕԴ. 34. — Գանձապահին պարտականութիւնն է .

Ա) Ստանալ եւ պահել կօմիտէի անունով զրկուած կամ դանձուած բոլոր գումարները .

Բ) Կատարել կօմիտէի որոշած բոլոր ծախքերը .

Գ) Ունենալ արկղի տոմար մը ուր մանրամասնօրէն նշանակելու է կօմիտէի ելքը եւ մուտքը (հրապարակով կատարուած հանդանակութեան գումարները առանձին առանձին արձանագրելու է տոմարին մէջ) .

Դ) Ամէն ամիս կօմիտէի ելեւմտական հաշիւը ներկայացնել անդամական ժողովին .

Ե) Կօմիտէին որոշումով ընթացիկ ծախքերու համար արտօնուած գումարը վար դնելով, գանձին մէջ մնացած դրամը զրկել Կեդր. Կօմիտէին ամէն երեք ամիսը անդամ մը :

ՅՕԴ. 35. — Կօմիտէի թղթակցութիւնները կը կատարուին պաշտօնական քղբի վրայ (որ կը հայթայթուի Կեդր. Կօմիտէին կողմէ) եւ կը ստորագրուին ատենապետին եւ ատենադպիրին կողմէ : Գանձային հաշիւները ստորագրելու է նաեւ գանձապետը :

ՄԱՆՕԹ. — Հասարակ քղբի վրայ եւ կեղծ անուններով ստորագրուած գրութիւնները կը նկատուին անվաւեր :

ՅՕԴ. 36. — Կօմիտէի ստացած բոլոր նամակները, չգործածուած անդամատետրերը եւ դրօշմները ամէն տարեշրջանի վերջը, Պատգմ. ժողովի գումարումէն ամիս մը առաջ, կը զրկուին Կեդր. Կօմիտէին :

ԾԱՆՕԹ. — Շրջաբերականները կօմիտէի ժողովին մէջ կարդացուելէ ետք, անմիջապէս կը վերադարձուին Կ. Կօմիտէին:

Գ Ո Ր Ծ Ի Զ Ն Ե Ր

ՅՕԴ. 37. — Գործիչ կը ճանչցուին ա՛յն ընկերները, որոնք Կեդր. Կօմիտէի կողմէ կը հրաւիրուին աջակցելու Ամերիկայի մէջ Հ. Յ. Դաշնակցութեան գրաւոր եւ բերանացի փրօփականտի դործին:

ՅՕԴ. 38. — Գործիչները եւ միւս պատասխանատու պաշտօնեաները (տես Ծանօթ. Յօդուած 45) պարտաւոր են հետեւել Կեդր. Կօմիտէի հրահանգներուն. հակառակ պարագային Կեդր. Կօմիտէն իրաւունք ունի զանոնք պաշտօնանկ ընելու:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

ՅՕԴ. 39. — Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կեդր. Կօմիտէն Ամերիկայի դաշնակցական կօմիտէներու դործադիր իշխանութիւնն է: Ան է Ամերիկայի Դաշնակցութեան պաշտօնական ներկայացուցիչը թէ՛ երկրի եւ թէ՛ արտասահմանի դաշնակցական մարմիններուն, ինչպէս նաեւ հայ կամ օտար կազմակերպութիւններու առջեւ եւ անոր միջոցով միայն կրնան կատարուիլ կօմիտէներու բոլոր պաշտօնական յարաբերութիւնները վերը յիշուած մարմիններուն հետ:

ՅՕԴ. 40. — Կեդր. Կօմիտէին պարտականութիւնն է.

Ա) Գործադրել Հ. Յ. Դ. Ամերիկայի Պատգամաւորական Ժողովի որոշումները.

Բ) Նոր կօմիտէներ կազմակերպելու հետամուտ ըլլալ:

Գ) Մղում տալ կօմիտէներու դործունէութեան եւ քննել անոնց հաշիւները.

Դ) Հրապարակային ժողովներու համար ատենախօսներ պատրաստել.

Ե) Հետամուտ ըլլալ որ կօմիտէներու մէջ ծագած սեւէ խնդիր օրինական ճամբով լուծուած մը դանէ.

Զ) Շրջաբերականով հաղորդել կօմիտէներուն մեր կազմակերպութեան դործունէութեան վերաբերեալ լուրերը.

Է) Կօմիտէներէն պահանջել եռամսեայ հաշուեկիչու եւ տեղեկագրեր, այդ մասին պատրաստուած մասնաւոր հարցարաններու միջոցով.

Ը) Իւրաքանչիւր եռամսեայ տեղեկագրերը ամփոփելով՝ հաղորդել կօմիտէներուն.

Թ) Կազմակերպել պարբերական դասախօսական կամ խորհրդակցական ժողովներ՝ պատրաստելու համար ատենախօսփրօփականտիսթներ զանազան շրջաններու կարող ընկերներէն:

ՅՕԴ. 41. — Կեդր. Կօմիտէն կազմակերպական ո՛րեւէ կարեւոր խնդրի առթիւ, խորհրդակցութեան համար կրնայ հրաւիրել կարող ընկերներ: Շրջանի բանաւոր եւ գրաւոր փրօփականտին աջակցող ընկերներէ խորհրդակցական ժողով կը գումարուի նաեւ ա՛յն պարագային, երբ հարցի մը մասին Կեդր. Կօմիտէն չի կրնար երկու երրորդով որոշում տալ եւ փոքրամասնութիւնը կը պահանջէ խորհրդակցական ժողով:

307. 42.— Կեդր. Կօմիտէն կը բաղկանայ 9 անդամներէ, որոնք կ'ընտրուին Պատգ. Ժողովի կողմէն, մէկ տարի պաշտօնաւարութեան շրջանով եւ վերընտրելի են :

307. 43.— Կեդր. Կօմիտէի ընտրելի կրնան ըլլալ միայն այն ընկերները, որոնք մինչեւ ընտրութեան օրը գէթ երեք տարի անընդհատ գտնուած են Դաշնակցութեան մէջ եւ իրաւասու եղած են :

307. 44.— Կեդր. Կօմիտէի ընտրելի չեն կրնար ըլլալ .

Ա) Կուսակցական դատական ամբաստանութեան տակ գտնուող ընկերները .

Բ) Արտաքսուած եւ վերտօն ընդունուած ընկերները, իրենց կրկին անգամ ներս ընդունուած թուականէն մինչեւ երեք տարի :

307. 45.— Եթէ Կեդր. Կօմիտէի մէկ կամ աւելի անդամները պակսին, Կեդր. Կօմիտէն Պատգմ. Ժողովին մէջ առաւելագոյն քուէ ստացող ընկերներու ցանկը կը զրկէ Կօմիտէներուն, որոնք այդ ցանկի վրայէն կ'ընտրեն պակսած անդամը կամ անդամները :

ԾԱՆՈԹ.— Կեդր. Կօմիտէի անդամ մը չի կրնար պատասխանատու պաշտօն ստանձնել (պատասխանատու պաշտօնեաներ եւ «Հայրենիք»ի խմբագիր եւ մէնէնըր, «Ասպարէզ»ի խմբագիր եւ մէնէնըր եւ գործիչ ընկերներ) :

307. 46.— Եթէ Կեդր. Կօմիտէի անդամներու

թիւին կէսէն աւելի պակսի, արտակարգ Պատգմ. Ժողով կը գումարուի նոր ընտրութիւն կատարելու համար :

ԿԵՂՐ. ԿՕՄԻՏԷԻ ԴԻՒԱՆ

307. 47.— Կեդր. Կօմիտէն կ'ընտրէ իր դիւանը, որ կը բաղկանայ ատենապետէ, ատենադպիրէ եւ դանձապահէ :

307. 48.— Ատենապետին պարտականութիւնն է .

Ա) Ատենապետել Կեդր. Կօմիտէի Ժողովներուն .

Բ) Ատենադպիրին հետ խորհրդակցելով հոգածու ըլլալ որ Կեդր. Կօմիտէի գործերը անթերի եւ անյարգաղ առաջ տարուին .

Գ) Ատենադպիրին հետ բանալ եւ կարգալ Կեդր. Կօմիտէին եկած նամակները .

Դ) Պահել Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կօմիտէի հայերէն եւ անգլիերէն կնիքները եւ ստորագրել ու կնքել ատենադպիրին եւ ի հարկին դանձապահին հետ պաշտօնական բոլոր թուղթերը :

307. 49.— Ատենադպիրին պարտականութիւնն է .

Ա) Կեդր. Կօմիտէի Ժողովներուն համառօտ ատենադրութիւնը արձանագրել յատուկ տոմարի մը մէջ .

Բ) Գանձային խնդիրներէն զատ՝ ամէն կարգի դրութիւններ՝ շրջաբերական, նամակ եւ այլն պատրաստել .

Գ) Ունենալ Ամերիկայի բոլոր Կօմիտէներու մանրամասն անդամական ցանկը եւ նշանակել հոն

մահերը, հրաժարումները, տեղափոխումները, դադարեցումները եւ արտաքսումները.

Գ) Կեղը. Կօմիտէին եկած բոլոր դրութիւնները բանալ եւ հաղորդել միւս անդամներուն՝ անոնց կարծիքները ստանալու համար.

Ե) Խնամով պահել Կեղը. Կօմիտէի անունով իրեն յանձնուած բոլոր դրութիւնները՝ Պատգմ. Ժողովին ներկայացնելու համար.

Զ) Գանձապահին ընկալագրերը արձանագրելու ատենապետին հետ եւ մասնաւոր տոմարի մը մէջ արձանագրել այդ գումարները.

Է) Պատրաստել Պատգմ. Ժողովին ներկայացուելիք տարեկան մանրամասն տեղեկագիրը.

Ը) Կազմել եւ պահել Կեղը. Կօմիտէի բոլոր զոյգերու յուցակը:

ՅՕԳ. 50.— Գանձապահին պարտականութիւնն է.

Ա) Ստանալ Կեղը. Կօմիտէի անունով եկած բոլոր գումարները եւ ընկալագրերը զրկել ատենապետին միջոցով.

Բ) Դրամ յանձնել, զրկել եւ ծախքեր ընել Կեղը. Կօմիտէի զբաւոր սրտչումով՝ վաւերացուած ատենապետի եւ ատենադպիրի ստորագրութիւններով.

Գ) Տոմարի մը մէջ կանոնաւորապէս եւ մասնաւորապէս արձանագրել Կեղը. Կօմիտէի ելուձումները.

Դ) Իր կատարած վճարումներուն եւ ծախքերուն ընկալագրերն ու արդարացուցիչ վաւերաթուղթերը յանձնել քարտուղարին.

Ե) Ամիսը անգամ մը Կեղը. Կօմիտէին ներկայացնել իր արկղին հաշիւը:

ՅՕԳ. 51.— Կեղը. Կօմիտէն հաւաքաբար պատասխանատու է գանձապահին յանձնուած բոլոր գումարներուն համար եւ հետեւաբար ապառ է գանձին սպահովութեան համար ընել իր անհրաժեշտ սեպած կարգադրութիւնները:

ԾԱՆՕԹ.— Ապահովութեան լրագոյն միջոցն է գանձապետը եւ ատենադպիրը դնել երաշխաւորութեան (պահս) տակ:

ՅՕԳ. 52.— Կեղը. Կօմիտէն պարտաւոր է իր բոլոր հաշիւները, ինչպէս նաեւ բոլոր դրութիւնները Պատգմ. Ժողովին օրը բերել դնել պատկան յանձնախումբերու արամագրութեան տակ:

ՅՕԳ. 53.— Կեղը. Կօմիտէն պարտաւոր է Պատգ. Ժողովի գումարումէն երկու ամիս առաջ.—

Ա) Հաղորդել բոլոր կօմիտէներուն Պատգմ. Ժողովի գումարման օրն ու տեղը.

Բ) Պահանջել կօմիտէներէն իրենց տարեկան հաշուեկշիւները ու տեղեկագիրները.

Գ) Պահանջել որ տուրքերու հաշիւէն ապառիկ ունեցող կօմիտէները փութան իրենց հաշիւները զոցել եւ զբամբ հասցնել Կեղը. Կօմիտէին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՅԱՆՅԱՆՔՆԵՐ

ՅՕԳ. 54.— Կազմակերպութեան դէմ յանցաւոր կը նկատուի այն ընկերը, որ.

Ա) Դաշնակցական կարգապահութեան դէմ անաստող ընթացք մը կը բռնէ:

Բ) Կօմիտէի մը ներքին գործերու մասին ուրիշներուն կը խօսի.

Գ) Սուտ եւ սխալ տեղեկութիւններ կուտայ իր մասին՝ կօմիտէին մէջ ընդունուելու համար.

Դ) Գոեհիկ կամ անպատշաճ լեզու կը գործածէ կօմիտէի ժողովին մէջ.

Ե) Դիտմամբ կը խանգարէ կօմիտէի ժողովը կամ անպատշաճ վարմունք մը կ'ունենայ հոն.

Ձ) Կօմիտէի ժողովը կը մտնէ արբեցած վիճակի մէջ.

Ի) Դաշնակցական դատարանի ներկայանալէ կը խուսափի.

Լ) Կօմիտէի կամ ուրիշ ոեւէ դաշնակցական մարմնի մը որոշումները կամ Դաշնակցութեան յեղափոխական գաղտնիք կաղծող տեղեկութիւնները կը հաղորդէ ոչ-դաշնակցականներու.

Ս) Կեդր. Կօմիտէին կամ Պատգմ. ժողովին տեղեկութիւններն ու որոշումները, որոնք այդ մարմիններուն մէջ մնալ սահմանուած են, կը հաղորդէ այդ մարմիններէն դուրս գտնուող ընկերներու.

Ժ) Գիտակցարար երեսի վրայ կը ձգէ կամ առանց բանաւոր պատճառի կը մերժէ կատարել իրեն յանձնուած պաշտօն մը.

ԺԱ) Կազմակերպութեան անունը չարաչար կը գործածէ դրամական շահու համար.

ԺԲ) Կօմիտէին պատկանող ոեւէ դումար կամ ինչք կ'իւրացնէ եւ կամ չարաչար կը գործածէ.

ԺԳ) Արբեցութեամբ, խաղամոլութեամբ եւ կամ ուրիշ անբարոյական արարքներով դայթակ-

ղութիւն կը պատճառէ իր ընկերներուն եւ հասարակութեան.

ԺԴ) Գիտակցարար գործադուլ աւելնելով կը վնասէ աշխատաւորական շարժումին:

ՅՕԴ. 55.— Երբ Կեդր. Կօմիտէի անդամներէն մէկը զեղծում մը գործէ, ընկերական ատեանի կը հրաւիրուի, զոր կը կազմեն Կեդր. Կօմիտէի միւս բոլոր անդամները, գործիչները եւ Շրջանային Խորհուրդներու մէկ մէկ ներկայացուցիչները, հաւասար ձայնով: Ատեանը լիազօր է պաշտօնանկ ընելու ամբաստանուածը:

ՅՕԴ. 56.— Երբ Կ. Կօմիտէն պարտադանց ըլլայ կամ ապօրինի ընթացքի մէջ գտնուի, անկէ բացատրութիւն կրնայ պահանջել ամէն կօմիտէ: Տըրուած բացատրութիւնները անբաւարար նկատուելու պարագային՝ կօմիտէն իր Շրջ. Խորհուրդին միջոցաւ խնդիրը կը յանձնէ ուշադրութեանը իր շրջանի կօմիտէներուն, որոնք եթէ համակարծիք գտնուին՝ բացատրութիւն կը պահանջեն Կ. Կօմիտէէն. եւ երբ անոնք ալ գոհացում չտանան ու խնդիրը ծանրակշիռ նկատուի, կը դումարուի Շրջանային արտակարգ Պատգմ. ժողով:

Այս ժողովին որոշումով՝ Շրջ. Խորհուրդը կը դիմէ Ամերիկայի բոլոր կօմիտէներուն եւ կ'ստանայ անոնց կարծիքը արտակարգ Պատգմ. ժողով մը դումարելու մասին՝ յանձնարարելով որ ամէն կօմիտէ իր որոշումը հաղորդէ թէ՛ իրեն եւ թէ՛ Կ. Կօմիտէին:

Եթէ կօմիտէներու մեծամասնութիւնը անհրաժեշտ դատէ, Շրջ. Խորհուրդը կը պահանջէ Կ. Կօ-

միտէէն արտակարգ Պատգմ. Ժողով գումարել առ առաւելն երկու ամիսէն, եւ եթէ Կ. Կօմիտէն չկատարէ այս պահանջը՝ Երջ. Խորհուրդը կը հրաւիրէ Ամերիկայի բոլոր կօմիտէները արտակարգ Պատգմ. Ժողովի:

ՅՕԴ. 57.— Զանցառու եւ պարտադանց Կ. Կօմիտէէն բացատրութիւն կրնայ պահանջել ոեւէ Երջ. Խորհուրդ, եւ եթէ դոճացում չստանայ՝ իրենզերը կը յանձնէ ուշադրութեանը իր շրջանի կօմիտէներուն, որոնք իրենց կարգին բացատրութիւն կը պահանջեն Կ. Կօմիտէէն. եւ երբ չտրուին բաւարար բացատրութիւններ՝ կը գումարուի Երջանաթին արտակարգ Պատգմ. Ժողով:

Այս Ժողովին որոշումով՝ Երջ. Խորհուրդը կը դիմէ Ամերիկայի բոլոր կօմիտէներուն եւ կ'ստանայ անոնց կարծիքը արտակարգ Պատգմ. Ժողով մը գումարելու մասին՝ յանձնարարելով որ ամէն կօմիտէ իր որոշումը հաղորդէ թէ՛ իրեն եւ թէ՛ Կ. Կօմիտէին:

Եթէ կօմիտէներու մեծամասնութիւնը անհրաժեշտ դատէ, Երջ. Խորհուրդը կը պահանջէ Կ. Կօմիտէէն արտակարգ Պատգմ. Ժողով գումարել առ առաւելն երկու ամիսէն, եւ եթէ Կ. Կօմիտէն չկատարէ այս պահանջը՝ Երջ. Խորհուրդը կը հրաւիրէ Ամերիկայի բոլոր կօմիտէները արտակարգ Պատգմ. Ժողովի:

ԲՈՂՈՒՔ ՆԵՐԿԱՅԱՅՆՆԵԼՈՒ ԵՒ ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՒ
ԵՂԱՆԱԿԸ

ՅՕԴ. 58.— Ամէն բողոք՝ ոեւէ ընկերի, ընկեր-

ներու եւ կամ մարմինի դէմ՝ դրաւոր կերպով կը ներկայացուի պատկան մարմինի օրինաւոր Ժողովին:

ՅՕԴ. 59.— Պատիժները չորս կարգի կը բաժնուին.—

Ա) Յանդիմանութիւն.

Բ) Բուէէ զրկում.

Գ) Դրամական տուգանք.

Դ) Արտաքսում:

ՅՕԴ. 60.— Թեթեւ յանցանքներու համար ատենապետը Ժողովի ընդհանուր կարծիքը առնելէ յետոյ՝ համապատասխան որոշում կը պահանջէ: Ծանր յանցանքներու համար Ժողովի ընդհանուր կարծիքը լսելէ վերջ՝ ատենապետը կը պահանջէ որ, բայց բուէով ընտրուի 3-5 անդամ ունեցող դատական յանձնախումբ մը (դատ. յանձնախումբի անդամները պէտք է դատին հետ ոեւէ առնչութիւն չունենան):

ՅՕԴ. 61.— Դատական յանձնախումբին յանձնուած դատը կը քննուի կօմիտէի Ժողովէն դուրս եւ արդիւնքը դրաւոր կերպով կը ներկայացուի յաջորդ Ժողովին:

ՅՕԴ. 62.— Ծահագրգռուող կողմերը ներկայ կ'ըլլան դատի քննութեան՝ իրենց տեսակէտները պարզելու եւ, ի պահանջել հարկին, յանձնախումբին տալու հարկ եղած իրաստերն ու տեղեկութիւնները: Յանձնախումբը երկու կողմերը, ինչպէս նաև վկաները, լսելէ յետոյ, առանձինն կուտայ իր վճիռը:

ՅՕԴ. 63.— Դատական յանձնախումբի վճիռ-

ները կ'անցնին մեծամասնութեան քուէով եւ կը վաւերացունին կամ կը մերժունին կօմիտէին կողմէն :

ՅՕԴ. 64.— Եթէ ամբաստանալը կամ բողոքարկուն բացակայի (բանաւոր բացակայութիւնը դրաւոր կերպով եւ ժամանակին հասցնելու է պատկան մարմինին) դատական յանձնախումբը կը շարունակէ դատավարութիւնը եւ կ'արձակէ իր վըճիւրը :

ՅՕԴ. 65.— Ուելք ընկեր որ դատ. յանձնախումբին կողմէ կը հրաւիրուի վկայութիւն կամ տեղեկութիւն տալու, պարտաւոր է ներկայանալ ատենին եւ դոճացում տալ եղած հարցապնդումին. հակառակ պարագային յանցաւոր կը նկատուի :

ՅՕԴ. 66.— Պատիժի (յանդիմանութիւն, քուէէ գրկում, դրամական տուգանք եւ արտաբանում) բանաձեւը կօմիտէի ժողովին մէջ կը կարգացուի դատապարտուած ընկերոջ ներկայութեան. եթէ ընկերը խոյս տայ որոշուած օրը ներկայանալէ եւ պատիժը լսելէ՝ կը գրկուի դաճնակցական բոլոր իրաւունքներէն, մինչեւ որ ներկայանայ եւ լսէ պատիժը :

ԲՈՂՈՔ ԴԱՏԱՎՃԻՌԻՆ ԴԵՄ

ՅՕԴ. 67.— Կօմիտէի մը դատավճիռին դէմ եղած բողոքը կ'ուղղուի Շրջանային Խորհուրդին. դոճացում չտացուելու պարագային՝ Կեդր. Կօմիտէին : Բոլոր բողոքները պէտք է ներկայացնել դատավճիռը հարգուած օրէն առ առաւելն ամիս մը ետքը :

ՅՕԴ. 68.— Բողոքարկուն իր բողոքադիւրը

կ'ուղղէ կօմիտէին, որ այդ դրութիւնը դատին վերաբերեալ բոլոր թուղթերուն հետ կը զրկէ Շրջ. Խորհուրդին եւ դոճացում չտանալու պարագային՝ Կեդր. Կօմիտէին : Կօմիտէն պատասխանատուութեան կ'ենթարկուի եթէ բողոքը ստանալէ ետք մինչեւ եօթ օր բոլոր վերոյիշեալ դրութիւնները չյանձնէ պատկան մարմինին : Կօմիտէի վճիռը պարտաւորիչ է ցորչափ չէ բեկանուած Շրջան. Խորհուրդի եւ կամ Կեդր. Կօմիտէի կողմէն :

ՅՕԴ. 69.— Շրջ. Խորհուրդը կրնայ հաստատել կօմիտէի վճիռը կամ բեկանել : Երկրորդ պարագային՝ նոր դատ մը կը կատարէ, լուր տալով շահագրգռուող կողմերուն : Որոշուած օրը անոնք ներկայ ըլլան թէ առանց արդարացուցիչ պատճառի բացակային, Շրջ. Խորհուրդը կը քննէ դատը եւ կուտայ իր վճիռը, որ պարտաւորիչ է քանի չէ բեկանուած Կ. Կօմիտէի կողմէն :

ԾԱՆՕԹ.— Շրջ. Խորհուրդի վնիռին դէմ բողոք կ'ուղղուի Կ. Կ.-ին, որ կրնայ հաստատել կամ բեկանել այդ վնիռը : Երկրորդ պարագային՝ կեդր. Կօմիտէն կը կատարէ նոր դատ մը, լուր տալով շահագրգռուող կողմերուն : Որոշուած օրը անոնք ներկայ ըլլան քէ առանց արդարացուցիչ պատճառի բացակային, Կեդր. Կօմիտէն կը քննէ դատը եւ կուտայ իր վնիռը, որ պարտաւորիչ է ցորչափ չէ բեկանուած Պատգմ. Ժողովի կողմէն :

ՅՕԴ. 70.— Եթէ սեկ կազմ (խումբ, կօմիտէ, Շրջ. Խորհուրդ) ուղէ բողոքել Կեդր. Կօմիտէի վըճիռին դէմ, պէտք է դիմէ Պատգմ. Ժողովին :

ՅՕԴ. 71.— Պատգմ. Ժողովի դատական յանձ-

նախուժման անջեւ կը հրաւիրուին երկու կողմերը այն ատեն միայն, երբ բողոքադիրը պատճառաբանուած է եւ դատաւարութեան մէջ անկանոնութիւն, քերութիւն կամ աշտուրթիւն տեղի ունեցած է: Յանձնախումբին անջեւ նոր դատ չի կրնար տեղի ունենալ, այլ կրնայ խօսուիլ ու վկայուիլ միմիայն բողոքին վերոյիշեալ կէտերը ապացուցանելու համար:

ՅՕԴ. 72.— Դատական յանձնախումբը իր եզրակացութիւնները կ'ենթարկէ Պատգմ. Ժողովի վաւերացումին: Պատգմ. Ժողովի որոշումը պաշտօնապէս կը հաղորդուի Կեդր. Կօմիտէի կողմէն պատական կօմիտէին՝ ի գործադրութիւն:

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ

ՅՕԴ. 73.— Երբ ընկեր մը կամ ընկերներ իբրեւ ամբաստանեալ կամ ամբաստանիչ կը ներկայանան դաշնակցական ատեաններու անջեւ, կամ երբ իրենց դէմ արձակուած վճիռի մը վերաքննութիւնը կը պահանջեն, պարտաւոր են ձեռնհաս մարմնի որոշած քանակութեամբ երաշխաւորութեան դումար մը թողուլ իրենց պատկանած կօմիտէի, Շրջ. Խորհուրդի կամ Կեդր. Կօմիտէի մօտ, եւ դումարներուն ընկալազրբերը ներկայացնել դատական ատեանին:

ՅՕԴ. 74.— Ատեանի որոշման համաձայն, երաշխաւորութեան դումարներէն կը հոգացուին դատական ծախքերը: Մնացած դումարները կը վերագործուին իրենց տէրերուն:

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ

ՅՕԴ. 75.— Ուել ընկեր, որ կօմիտէէ մը հեռացուած է իր սուրբերը չվճարելուն համար, կըրնայ նորէն ընդունուիլ, կանխիկ վճարելով իր պարտքը եւ ստանալով կօմիտէի քուէներու մեծամասնութեան հաւանութիւնը:

ԾԱՆՕԹ.— Վերահաստատումի բոլոր որոշումները ենթակայ են Կ. Կօմիտէի վաւերացման:

ՅՕԴ. 76.— Անոնք, որ կամովին հրաժարած են կօմիտէէ մը՝ առանց պարտք թողելու եւ առանց իրենց մասին արձակուած վճիռէ մը խուսափած ըլլալու, իրր թեկնածու կը նկատուին եւ կ'ընդունուին յօդ. 3-ի եւ 7-ի համաձայն:

ՅՕԴ. 77.— Դատաւճիռէ մը խուսափելու համար հրաժարած ընկերները չեն կրնար վերստին ընդունուիլ՝ մինչեւ որ չենթարկուին իրենց մասին տրուած վճիռին:

ՅՕԴ. 78.— Կօմիտէ մը կրնայ արտաքսուած կամ կախակայուած ընկեր մը կրկին ներս ընդունիլ՝ քուէներու երկու-երրորդի առաւելութեամբ, եթէ մեղմացուցիչ պարազայի մը հանդէպ գտնուի, կամ տրուած պատիժը չափազանց համարէ: Կօմիտէն պարտաւոր է իր նոր կարգադրութեան մասին լուր տալ Կեդր. Կօմիտէին:

ՅՕԴ. 79.— Մէկ անգամ արտաքսուած ընկեր մը կրնայ վերստին ընդունուիլ Դաշնակցութեան մէջ.

Ա) եթէ մեղմացուցիչ պարազաներ կամ արգարացուցիչ նոր վկայութիւններ երևան եկած ըլլան.

Բ) Եթէ ստուգուի թէ իր արտաքսուածին հետեւող ժամանակամիջոցին յիշեալը դոհացուցիչ կերպով բարեկտրած է իր վարմունքը:

Արտաքսուած ընկեր մը վերստին ներս ընդունելու իրաւունքը ունի միայն անոր դատաւճիտը արձակող մարմինը (խումբ, կոմիտէ, Շրջ. Խորհուրդ, Կ. Կոմիտէ կամ Պատգամ. Ժողով): Այդպիսին նոր ընկեր կը նկատուի:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ

ՅՕԴ. 80. — Ամերիկայի կոմիտէները վեց շրջանի կը բաժնուին:—

Ա) Պօսթըն.

Բ) Նու Եօրք.

Գ) Քանրտա.

Դ) Տիթրօիթ.

Ե) Շիքսհօ.

Զ) Գալիֆօրնիա:

Պօսթընի շրջանին կը պատկանին հետեւեալ վայրերու կոմիտէները. — Իսթ Ուէյմբօհ, Լին, Լուէլ, Լարնս, Հուայթընզվիլ, Հէյլըրհիլ, Մանչեսթըր, Քանքըրա, Նէշուա, Փօրթլընա, Մատիւսըն, Ուինուսքի, Մօլարն, Նուպէրիփօրթ, Ուոթըրթաուն, Նիւթըն Ըփըր Յօլդ, Քէյմպըրիճ, Սաութհ Պօսթըն, Պօսթըն, Չարլզթաուն, Չլսի, Պրիճուօթըր, Միլփըրա, Վուսաքէթ, Վուսթըր, Հըրաքըն, Յիչպըրի, Յրանքին, Ինտիւն Օրշըրա, Սիլընիփիլ, Սէյլըմ, Միտլօրօ, Պրաքթըն, Փութաքէթ-Սէնթըրըլ Յօլդ, Փրալիտէնս, Իսթ Փրալիտէնս, Եւ յառաջիկային անոնց մօտերը կազմուելիք կոմի-

տէները:

Նու Եօրքի շրջանին կը պատկանին հետեւեալ վայրերու կոմիտէները. — Հարթֆըրա, Թրօյ, Ուօթըրվիլթ, Ուաշինկթըն, Նու Եօրք, Պրանքս, Պըրուքլին, Ուէսթ Նու Եօրք, Նու Հէյլըն, Նու Պրիթըն, Մէրիտըն, Ուէսթ Հօլքըն, Պրիճփօրթ, Եանքըրդ, Նօրֆօք, Փէթըրսըն, Պրիկըմթըն, Յիլըտէլփիա, Բիչմընա, Թրէնթըն, Քէմտըն, Եութիքը, Հօփուէլ, Պրիաթըլ, Նուրք, Սիլըքըիւզ Եւ յառաջիկային անոնց մօտերը կազմուելիք կոմիտէները:

Քանրտայի շրջանին կը պատկանին հետեւեալ կոմիտէները. — Կօլթ, Կէօլֆ, Համիլթըն, Քիչնըր, Նայաիլըֆօլդ, Պաֆլօ, Պրէնթֆըրա, Սէյնթ Քէթհըրինզ, Մըսինա, Թըրանթօ Եւ յառաջիկային անոնց մօտերը կազմուելիք կոմիտէները:

Տիթրօիթի շրջանին կը պատկանին հետեւեալ կոմիտէները. — Տիթրօիթի հինգ կոմիտէները (Տէլըէյ, Քաղաք, Իսթ Ճէֆըրսըն, Ուէսթ Պուլլփարա Եւ Հայլընա Փարք), Փօնթիաք, Լանսինկ, Կրանտ Բաիտալ, Թըլիաօ, Քիլվէնա, Էյքըրն, Երնկաթաուն, Քըլմապըս (խումբ), Տուքէյն, Իրի, Միտլիլ, Պրատըք, Եւ յառաջիկային անոնց մօտերը կազմուելիք կոմիտէները:

Շիքսհօի շրջանին կը պատկանին հետեւեալ կոմիտէները. — Սէյնթ Լուիզ, Իսթ Սէյնթ Լուիզ, Միլիտարիլիս, Կրանիթ Սիթի, Քանդըս Սիթի, Սէյնթ ձօզըֆ, Պէթընտօրֆ, Կէրի, Ինտիւնա Հարպըր, Ուէսթ Փուլմըն, Շիքսհօ, Սաութհ Շիքսհօ, Ուօքէկըն, Քընօշա, Բէյսին, Միլուօքի, Սաութհ

Մելուօքի, Վուա Րիվըր եւ յառաջիկային անոնց մօտերը կազմուելիք կօմիտէները :

Քալիֆօրնիայի շրջանին կը պատկանին հետեւեալ կօմիտէները.— Յրէզնօ, Լօղ Անճըլըս (Ուէսթ), Փասուլըր, Եզըմ, Քինկզզըրի, Սան Յըրնչիսիօ, Թըրրաք, Փարլիէր, Թըքօմա, Րիտլի, Սիւաթլ, Թուլարէ, Սէլմը, Քլօվիս, Տէլ Րէյ, եւ յառաջիկային անոնց մօտերը կազմուելիք կօմիտէները :

ՅՕԴ. 81.— Շրջանի մը կօմիտէներու պատգամաւորներէն կազմուած ժողովը կը կոչուի Շրջանային Ժողով, ուր կ'ընտրուի գործադիր մարմին մը Շրջանային Խորհուրդ անուամբ :

ԾԱՆՕԹ. Ա.— Շրջանային Ժողովի պատգամաւորներուն ընտրութիւնը կը կատարուի ներկայ կանոնագրի յօդուած 95-ի համաձայն :

ԾԱՆՕԹ. Բ.— Շրջանային Ժողովները կը գումարուին Ամեր. Ընդի. Պատգ. Ժողովէն առնուազմէ կ'ամիս առաջ :

ՅՕԴ. 82.— Շրջանային Ժողով կը գումարուի.—

Ա) Շրջանի կօմիտէի մը կողմէն Կեդր. Կօմիտէի ղէմ բողոք մը բերու.

Բ) Շրջանի գործերու բարելաւութեանը մասին խորհրդակցելու.

Գ) Շրջանային Խորհուրդը ընտրելու :

ՅՕԴ. 83.— Շրջանային Խորհուրդը կը բաղկանայ 5-7 ընկերներէ, մէկ տարի պաշտօնավարութեան պայմանով եւ վերընտրելի է :

ԾԱՆՕԹ.— Շրջ. Խորհուրդի անդամ կրնան ըլլալ միայն այն ընկերները, որոնք գէթ երկու տարի գտնուած են Դաշնակցութեան Ամերիկայի կազ-

մին մէջ եւ իրաւասու են յօդուած 10-ի համաձայն :

ՅՕԴ. 84.— Շրջ. Խորհուրդի պարտականութիւններն են.—

Ա) Այցելել իր շրջանի կօմիտէներուն եւ քննել անոնց հաշիւներն ու արձանագրութիւնները .

Բ) Համաձայն Կեդր. Կօմիտէի հրահանգներուն՝ գործադրութեան դնել Շրջ. Ժողովի որոշումները եւ ստտարել կուսակցական փրօփականտի գործին :

ՅՕԴ. 85.— Շրջ. Խորհուրդը կը համարուի իր շրջանի Գործադիր Մարմինը եւ առաջին վերաքըննիչ Ատեանը :

ՅՕԴ. 86.— Իւրաքանչիւր Շրջ. Խորհուրդի տարեկան պիւտճէն կ'որոշուի Հ. Յ. Դ. Ամեր. Ընդհ. Պատգմ. Ժողովին կողմէ : *

ՅՕԴ. 87.— Շրջ. Խորհուրդները իրենց վրայ գրուած պարտականութիւնները կատարելու համար կ'ստանան Կեդր. Կօմիտէէն բոլոր հարկ եղած կազմակերպական տեղեկութիւնները :

ՅՕԴ. 88.— Շրջանային Խորհուրդները կը մասնակցին Հ. Յ. Դ. Ամերիկայի Ընդհ. Պատգմ. Ժողովին մէկ-մէկ ձայնով :

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 89.— Պատգմ. Ժողովը Ամերիկայի դաշնակցական շրջանի օրէնսդրական, դատական եւ ներկայացուցչական գերագոյն մարմինն է եւ կը գումարուի տարին անգամ մը :

ՅՕԴ. 90.— Արտակարգ Պատգմ. Ժողով կը գումարուի .

Ա) Երբ Կեդր. Կօմիտէն արտակարգ եւ ստիպողական դործի մը համար բոլոր Կօմիտէներու խորհրդակցութիւնը եւ հաւաքական տնօրինութիւնը անհրաժեշտ կը դռնէ .

Բ) Երբ Կօմիտէներու կէսէն առնուազն մէկ աւելին հարկ կը տեսնէ .

Գ) Երբ Կեդր. Կօմիտէն կը կազմալուծուի :

ԾԱՆՕԹ. — Կեդր. Կօմիտէի առնուազն հինգ անդամները կը պատրաստեն Պատգմ. Ժողովի հրաւիրագիրը :

307. 91. — Պատգմ. Ժողովը կ'ընտրէ պատգամաւորներ Հ. Յ. Դ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին մասնակցելու՝ յանուն Ամերիկայի Դաշնակցութեան :

ԾԱՆՕԹ. — Եթէ Ընդհ. Պատգմ. Ժողովը գումարուի Ամերիկայի Պատգմ. Ժողովէն առաջ, Կեդր. Կօմիտէն պարտաւոր է պատգամաւորական քեկնածուներու եռապատիկ ցանկ մը ղրկել բոլոր Կօմիտէներուն եւ անոնց (Պատգմ. Ժողովի քուէի ձայնով) մեծամասնութեան հաւանութեամբ ղրկել պատգամաւորներ : Միեւնոյն ատեն Կեդր. Կօմիտէն Ընդհ. Պատգմ. Ժողովի օրակարգի հարցերը կ'ուղարկէ Կօմիտէներուն ի քննութիւն :

307. 92. — Պատգմ. Ժողովը կ'ունենայ այլեւայլ յանձնախումբեր ըստ հարկին — դատական, հաշուեքննիչ, օրակարգի, յեղափոխական դործերու եւ այլն, — որոնց դործելու եղանակը ճշդուած է Պատգմ. Ժողովի ներքին կանոնադրութեամբ :

307. 93. — Պատգմ. Ժողովը կ'ստանայ Կեդր. Կօմիտէի համարատուութիւնը (տեղեկագրերն ու

հաշուեկշիւը) եւ հնարաւոր տնօրինութիւնները կ'ընէ պարտադանց մարմիններու (Կեդր. Կօմիտէի, Շրջ. Սորհուրդի, Կօմիտէի) կամ պատասխանատու ընկերներու նկատմամբ :

307. 94. — Պատգմ. Ժողովը կ'ընտրէ Կեդր. Կօմիտէն եռապատիկ ցանկի մը վրայէն դադտնի քուէարկութեամբ եւ քուէներու երկու-երրորդի առաւելութեամբ :

Քուէարկութենէն առաջ իւրաքանչիւր ընտրելիի մասին խորհրդակցութիւն կը կատարուի կամ կարծիքներ կը յայտնուին ընտրելիին բացակայութեանը :

307. 95. — Ամէն Կօմիտէ իր իրաւասու անդամներու թիւին համեմատութեամբ . ներկայացուցիչ կը ղրկէ Պատգմ. Ժողովին : Հինգ ընկերներէ բաղկացած Կօմիտէն Պատգմ. Ժողովին կը մասնակցի մէկ ձայնով, 25 ընկերներ ունեցող Կօմիտէն՝ 2 ձայնով, 45 ընկերներ ունեցող Կօմիտէն՝ 3 ձայնով եւ այսպէս իւրաքանչիւր յաւելուածական քսան անդամի համար աւելցնելով մէկ ձայն :

307. 96. — Իրաւասու են այն Կօմիտէները, որոնք վճարած են իրենց կազմակերպական տուրքի առնուազն երեք չորրորդը :

307. 97. — Այն հեռաւոր Կօմիտէները, որ 25 կամ աւելի անդամներ ունին եւ կը լրացնեն կանոնադրի տրամադրութիւնները, իրաւունք ունին ղրկելու իրենց պատգամաւորները, պայմանով որ երբ ու դարձի ծախքը 80 տօլարէն աւելի չլուայ : Երկու կամ աւելի Կօմիտէներ, որոնց իւրաքանչիւրը 25-էն պակաս ընկեր ունի, կրնան միանալ եւ

զրկել իրենց պատգամաւորը վերոյիշեալ պայմանով:

ՅՕԴ. 98.— Քսանէ պակաս անդամ ունեցող հեռաւոր կօմիտէները, ինչպէս նաև Քայիֆօրնիայի չըջանի կօմիտէները, կրնան Պատգմ. Ժողովին ներկայացուցիչ նշանակել տարրեր վայրերէ, եթէ ուէէ պատճառով իրենք չեն կրնար պատգամաւոր զրկել:

ԾԱՆՕԹ.— Եթէ նշանակուած պատգամաւորը

1) Ուրիտ տեղէ մը արդէն ընտրուած է,

2) Ուէէ պատճառով ընտրելի չի կրնար ըլլալ, Պատգմ. Ժողովը իրաւունք ունի այդ ձայնը ուրիտ ընկերոջ մը տալու:

ՅՕԴ. 99.— Պատգմ. Ժողովին չեն կրնար մասնակցել այն կօմիտէները, որոնք իրենց տարեկան տուբքը չեն վճարած կանխաւ (համաձայն յօդուած 96ի): Տուբքի մէկ մասը միայն վճարած կօմիտէներու պատգամաւորները կը մասնակցին Պատգմ. Ժողովին խորհրդակցական ձայնով:

ՅՕԴ. 100.— Այն նորակազմ կօմիտէները, որոնց վաւերացումը Պատգմ. Ժողովի գումարման օրէն գէթ վեց ամիս առաջ տեղի ունեցած չէ, չեն կրնար մասնակցել Պատգմ. Ժողովին:

ՅՕԴ. 101.— Պատգամաւոր կրնան ընտրուել միայն այն ընկերները, որոնք առնուազն մէկ տարի իրաւասու դաշնակցական եղած են եւ առնուազն վեց ամիս գտնուած նոյն կօմիտէին մէջ: Անոնց վկայագրին մէջ այս պարագաները մասնաւորապէս չեղարկու են:

ՅՕԴ. 102.— Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ

քուէ միայն կրնայ ունենալ եւ մէկ կօմիտէ միայն ներկայացնել: Բայց հեռաւոր վայրերու կօմիտէները, եթէ ծախքերը նկատի ունենալով չկրնան իրենց ձայներու համեմատութեամբ ներկայացուցիչ զըրկել, կրնան մէկ պատգամաւոր զրկել երկու ձայնով:

Հեռաւոր կօմիտէ մը կրնայ իր ձայնը տալ մօտակայ կօմիտէի մը պատգամաւորին:

ՅՕԴ. 103.— Կեդր. Կօմիտէի անդամները ինչպէս նաև պատասխանատու ընկերները պատգամաւոր չեն կրնար ընտրուել:

ՅՕԴ. 104.— Կեդր. Կօմիտէն հաւաքաբար մէկ քուէով կրնայ մասնակցել Պատգմ. Ժողովին, իր այդ իրաւունքը յանձնելով իր անդամներէն մէկուն: Կեդր. Կօմիտէին միւս անդամները ներկայ կը գտնուին Պատգմ. Ժողովին եւ կը մասնակցին վիճարանութիւններուն, բայց միայն խորհրդակցական ձայնի իրաւունքով:

ՅՕԴ. 105.— Գործիչ ընկերները, «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի խմբագրութիւնները, Ծըջ. Խորհուրդները մէկ մէկ քուէով կը մասնակցին Պատգմ. Ժողովին: Միւս պատասխանատու ընկերները ներկայ կը գտնուին Պատգմ. Ժողովին եւ կը մասնակցին վիճարանութիւններուն, բայց միայն խորհրդակցական ձայնի իրաւունքով:

ՅՕԴ. 106.— Պատգամաւորներու երկու-երրորդի ներկայութիւնը օրինական կը դարձնէ Պատգմ. Ժողովի բացումը:

ՅՕԴ. 107.— Պատգմ. Ժողովը կ'ունենայ իր ներքին կանոնադրութիւնը:

ՅՕԴ. 108.— Մէկ Ժողովի արձանագրութիւնը

կը կարդացուի յաջորդ ժողովին եւ կը վաւերացուի :

Լ ՈՒԾ ՈՒՄ

ՅՕԴ. 109. — Եթէ ունէ քաղաքական կամ այլ պատճառներով Դաշնակցութիւնը դադրեցնէ իր գոյութիւնը Ամերիկայի մէջ, վերջին Կեդր. Կօմիտէն կամ Շրջ. Սորհուրդը կամ կօմիտէն պարտաւոր է յանձնել Հ. Յ. Դ. Բիւրօին, կամ զայն փոխարինող ձեռնհաս դաշնակցական մարմինն, Ամերիկայի Դաշնակցութեան պատկանող ամէն կարգի անշարժ ու շարժուն գոյք կամ հնչուն դրամ եւ դիւանական բոլոր դրութիւնները :

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 110. — Պատգմ. ժողովը միայն կրնայ յաւելումներ կամ փոփոխութիւններ կատարել սոյն կանոնադրին վրայ :

Սոյն կանոնադրին ունէ յօդուածը փոփոխելու կամ ջնջելու վերաբերեալ ամէն առաջարկ իր պատճառարանութիւններով միասին կը ներկայացուի Կեդր. Կօմիտէին ամենէն ուշ Պատգմ. ժողովէն երեք ամիս առաջ. սրպէսդի Կեդր. Կօմիտէն Պատգ. ժողովին ներկայացուելիք հարցերու ցանկին մէջ դնելով զանոնք, ներկայացնէ կօմիտէներու քննութեանը : Ուղղակի Պատգմ. ժողովին բերուած կամ հոն յարուցուած այդպիսի առաջարկներ նկատի չեն առնուիր, այլ կը յանձնուին Կեդր. Կօմիտէին, որը ունի համար յաջորդ Պատգմ. ժողովին ներկայացուելիք հարցերու ցանկին վրայ :



